Կարիաժեշտ է ընդլայնել բանակցությունների ֆորմատը

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, անդրադառնալով ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանը, հայտարարել է, թե դրա խաղաղ լուծման մեջ միջազգային ընկերակցության շահագրգռվածությունը քաղաքական բարենպաստ ֆոն է ստեղծում:

Դրա հետ մեկտեղ Ղուկասյանն ավելացրել է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը եւ մյուս կազմակերպությունները կարող են առաջարկել միայն հակամարտության կարգավորման որոշակի գաղափարներ եւ տարբերակներ, իսկ հիմնախնդրի իրական լուծումը հնարավոր է միայն հակամարտության բուն կողմերի միջեւ ուղղակի բանակցությունների գործընթացում:

Ա.Ղուկասյանի խոսքերով, Ալիեւի եւ Քոչարյանի միջեւ ընթացող բանակցությունների շրջանակներում ձեռք բերված եւ ոչ մի համաձայնագիր չի կարող վերջնական լինել, եթե այն հաշվի չի առնում Լեռնային Ղարաբաղի դիրքորոշումը: ԼՂՀ նախագահը համոզված է, որ բանակցություններն ավելի արդյունավետ կլինեին ԼՂՀ-ին ներգրավելով՝ հանդիպումների ֆորմատն ընդլայնելու դեպքում: